Այո, մենք հող ենք ուզում

24 February, 2009 05:30:00



Օբաման ընտրվեց: Թուրքիան անհանգստանում է: Հայկական լոբբիստական կառույցները շարունակում են աշխատել: Իսկ Հայաստանում սպասում են:

Սպասում են ապրիլի 24-ին՝հույս ունենալով, որ ԱՄՆ նորընտիր նախագահը կկատարի իր խոստումն ու ելույթի ժամանակ կարտասանի «ցեղասպանություն» բառը:

Ամերիկայի հետ հույս մի կապեք

Ամերիկայի հետ կապված այսօր շատերը հույս չունեն: Բանը նրանում է, որ Բարաք Օբաման, նախագահ դառնալով, փոքր-ինչ փոխեց ԱՄՆ արտաքին քաղաքականության ուղին: Ամերիկայի ուշադրության կենտրոնում այսօր Աֆղանստանն է: Սա Հայաստանում շատերին վատ նշան է թվում:

Այսպես, փետրվարի 21-ին մամուլի ասուլիսի ժամանակ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանն ասաց, որ .«Ամերիկայի Միացյալ Նահանգները չեն ընդունի Հայոց ցեղասպանությունը»: Դրա պատճառները շատ բազմաշերտ են: Առաջին հերթին կարելի է նշել Աֆղանստանի հարցը: «Այս պահին ԱՄՆ ուշադրությունը կենտրոնացել է Աֆղանստանի վրա, և այս կոնտեքտում աշխարհաքաղաքական առումով աճում է Թուրքիայի դերը»,-նշել է թուրքագետը:

Ռուբեն Սաֆրաստյանը նաև հայտնել է, որ վերջերս Թուրքիա էր ժամանել ամերիկյան հետախուզության ղեկավարը: Այստեղ նա խոսացել էր Թուրքիայի կողմից ԱՄՆ քաղաքականությանը սատար կանգնելու մասին, բացի այդ քննարկվել է նաև Թուրքիայում նոր ռազմաբազա կառուցելու մասին առաջարկությունը:

Այս մասին ռուսական «Վեստի.ռու» կայքը գրում է, որ «Ղրղզստանում ամերիկյան ավիաբազայի փակման պատճառով ԱՄՆ-ն կարող է խնդրել Թուրքիային նոր ավիաբազա կառուցել՝ այս անգամ Տրաբզոնում»:

Այսպիսով, ամենայն հավանականությամբ այս տարի էլ Ամերիկան կբողարկի ցեղասպանություն բառը և կնախընտրի ոչ թե ճշմարտությունն, այլ քաղաքական շահը:

Թուրքիան պետք է ճանաչի ու վերադարձնի

Հայաստանում կարծում են, որ ցեղասպանության ընդունողն առաջին հերթին պետք է ոչ թե Ամերիկան, այլ Թուրքիան լինի: Այսպես, ՀՅԴ խմբակցության ներկայացուցիչ Կիրո Մանոյանը փետրվարի 24-ին լրագրողներին հայտնեց, որ իր կարծիքով «Թուրքիան զիջման կգնա, բայց ոչ մինչև ապրիլի 24-ը»: Քանի որ մարտին այս երկրում տեղական ընտրություններ են անցկացվելու և բնական է, որ բոլորն էլ փորձելու են ավելի ազգայնական երևալ:

Սակայն ՀՅԴ ներկայացուցիչն այսքանով չի սահմանափակվում: «Թուրքիան եթե ցեղասպանությունը ճանաչի, դա խնդրի վերջը չի լինի,-ասել է Կիրո Մանոյանը,-Մեր պատկերացումով մեզ պետք է հատուցում տրվի՝ տարածքների տեսքով»:

Նա նաև ավելացրել է՝ պետք չէ, որ Հայաստանը հրաժարվի իր իրավունքներից: Օրինակ, Թուրքիայի տարածքում բազմաթիվ հայ եկեղեցական կոթողներ կան, որոնց սեփականատերը Հայկական եկեղեցին պետք է լինի:

Այս հարցի շուրջ նույն օրը խոսել է նաև «Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի տնօրեն Արմեն Այվազյանը. «Մեզ մոտ Թուրքիայի հետ տարածքային խնդիրների մասին խոսելը տաբու է»,-ասել է փորձագետը: Այնինչ, նրա կարծիքով մեր ներկա իրավիճակն ու բոլոր դժվարությունները կապված են հենց տարածքային խնդիրների հետ:

Լիաննա Խաչատրյան

Powered by Vivvo CMS v4.0